ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

«13» 04 2022թ.
N: 02.1/02693-2022թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-50-77

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սամսոնյան

Ի պատասխան Ձեր 11.04.2022թ. №01//4997-2022 գրության ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի հրապարակ № 1/8 հասցեի հողամասում առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցման էսքիզային նախագծի վերաբերյալ, հայտնում ենք.

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեն չի տվել իր համաձայնությունը ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ-1 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի մաս հանդիսացող Գարեգին Նժդեհի հրապարակ № 1/8 հասցեի հողամասում առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցման էսքիզային նախագծին՝ հաշվի են առնվել Գարեգին Նժդեհի հրապարակի շուրջը ձևավորվող քաղաքաշինական նոր միջավայր, ինչպես նաև հաշվի են առնվել հարակից բազմաբնակարան շենքի բնակիչների կողմից Կոմիտե ներկայացված դիմում-բողոքները, առաջարկվել է կառուցապատման առաջարկությունը քննարկել համայնքի ավագանու նիստում և ավագանու որոշումը (կից գծագրական մասով) ներառել փաթեթում:

Միաժամանակ հայտնում ենք, որ հաշվի առնելով Գարեգին Նժդեհի հրապարակ № 1/8 հասցեի հարակից բազմաբնակարան շենքի բնակիչների բազմաթիվ բողոքներն ուղղված ՀՀ Շիրակի մարզպետին՝ ՀՀ Շիրակի

մարզպետարանը նույնպես կարևորում է Գյումրու ավագանու կողմից ընդունված որոշման առկայությունը ներկայացվող էսքիզային նախագծի փաթեթում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X

ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Շիրակի մարզպետի տեղակալ

Կ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Քաղաքաշինության վարչություն
Հուրիկ Մարտիրոսյան
Հեռ. (0312) 49000*166

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

-------------------------- N ------------------------------------

ՀՀ Շիրակի մարզպետ
տիկին Նազելի ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

2021 թվականի հոկտեմբերի 20-ի
N 01 //08435-2021 գրության

Հարգելի տիկին Բաղդասարյան

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ-1 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի մաս հանդիսացող Գարեգին Նժդեհի հրապարակ N 1/8 հասցեի հողամասում առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցման էսքիզային նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ նախատեսվող կառուցապատմամբ Գարեգին Նժդեհի հրապարակի շուրջը ձևավորվում է քաղաքաշինական նոր միջավայր, ինչպես նաև հաշվի առնելով հարակից բազմաբնակարան շենքի բնակիչների կողմից Կոմիտե ներկայացված դիմում-բողոքները, առաջարկում ենք կառուցապատման առաջարկությունը քննարկել համայնքի ավագանու նիստում և ավագանու որոշումը (կից գծագրական մասով) ներառել փաթեթում:

Հարգանքով՝

Invalid signature

X

ԱՐՄԵՆ ՂՈՒԼԱՐՅԱՆ

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Արմեն ՂՈՒԼԱՐՅԱՆ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության
պետի Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725
կատարող Անդրանիկ Ֆռանգյան, հեռախոս՝ 011 621 729